

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Հայաստանի Հանրապետության Անկախության Հռչակագրի ընդունման 33-ամյակի առթիվ

1990թ. օգոստոսի 23-ին ընդունված Հայաստանի Անկախության մասին հռչակագիրը Հայոց նորագույն պատմության մեջ, ըստ էության, մի նոր փուլի սկիզբ դրեց. արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը՝ հռչակվեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը:

Մեկ տարի անց՝ սեպտեմբերին, Հայաստանի անկախ հանրապետությունն այլևս իրողություն էր՝ ամրագրված համաժողովրդական հանրաքվեի արդյունքներով:

Այսօր էլ՝ ավելի քան երեք տասնամյակ անց, կարող ենք վստահ ասել, որ Անկախության հռչակագիրը հստակ գիտակցված ընտրություն էր, որի հիմքում նախորդ տասնամյակների, նաև դրանից առաջ անկախության նվիրյալների հերոսական պայքարն էր՝ հայոց ազատատենչ ոգին սերունդների մեջ վառ պահելու և անկախության բաղձալի օրվան հասնելու համար:

Վստահ եմ, որ անցած դժվարին ճանապարհի ձեռքբերումները միասնական ջանքերով կկարողանանք պահպանել, դրանց հավելել նորերը, դիմակայել բոլոր մարտահրավերներին ու աներեր կշարունակենք անկախության մեր երթը:

Բոլորիս համար այս նշանակալի իրադարձության օրը շնորհավորենք միմյանց և խոնարհվենք անկախության նահատակների սուրբ հիշատակի առջև: